



# ԲԱԶՄԱՎԷՊ

Է. ՏԱՐԻ. ԹԻԻ 17.

1849

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

6

Հարկատուր է պատանայ ճը որ ամէն ճարտու աստիճանին յարճար մեծարանքը ասայ :

ԱՏ անգամ տեսնուած է՝ որ պատանի մը ամէն մտաց ձիրքերն և ինքզինքը ուրիշներուն սիրելի ընել տարու յատկութիւններն ունենալէն ետքն ալ, ամենուն հետ պատշաճ մեծարանք չի վարուելուն համար, ինքն ալ ուրիշներուն աչքէն ելեր է. ընդհակառակն մտաց ձիրքերէ զուրկ եղող՝ բայց զուրիշները պատուողը ինքն ալ սէր ու մեծարանք գտեր է ամենէն : Աստի ամէն ջանք ըրէք, սիրելիք, որ պարտուպատշաճ մեծարանքով վարուիք անոնց հետ որոնք վիճակով ու բաղգով ձեզմէ վեր են : Իրաւ է որ միայն առաքինութիւնը և արդիւնքը արժանի են պատուոյ, բայց քաղաքականութիւնը և ընկերա-

կան կապը զմեզ կը պարտաւորեն որ մեզմէ վեր եղողներուն գլուխ ծռենք : Բոտուծոյ և օրինաց առջևը ամենքնիս ալ հաւասար ենք, սիրելիք. բայց յայտնի է որ աշխատողը՝ զինքը աշխատողն ողէն ստորին պիտի սեպէ, ծառայ կողուածն ալ պէտք է որ տէր մը ունենայ : Բնենքնուս վրայ իշխող թագաւորներն ու իշխաններն ալ իրենց իշխանութեանը պէտք է որ հպատակին, անանկ որ անոնք աւելի նեղութիւն կը քաշեն հրաման տարով քան թէ մենք հնազանդելով. անոր համար ալ աւելի ցաւակից պէտք է ըլլալ այնպիսեաց քան թէ վրանին նախանձիլ. ու թէ որ մէկը ունայնամտութեամբ մը այսպիսի

Ճշմարտութեանց դէմ դառնայ՝ մարդկային ընկերութենէ, դուրս հանել կը վայելէր զայնպիսին :

(Թ)է որ կ'ուզէք որ դուք ալ ծերութե ատեննիք պատկառելի ըլլաք ուրիշներուն , ծերոց վրայ սէր ու մեծարանք ցուցցէք : Ներունի մը տեսնաք որ ընտանի կերպով պատանեաց հետ կը վարուի և անոնց քաջալերութիւն կուտայ, իմացէք որ ինքն ալ իր տղայութե ատենը ծերոց պէտք եղած պատիւը տուեր է : Շատ անգամ պատանիք մեծերուն փորձառութեան տուած դասերը ծաղր կ'ընեն , սակայն քանի որ տարիքնին առնուն՝ այնչափ աւելի աղէկ կ'իմանան անոնց ճշմարտութիւնը . երանի անոնց՝ որ քիչ բան սորված են իրենց սխալմունքներովը :

7

Վիշ ընկերաց շահները :

ՄԻՆ բանէ աւելի գէշ ընկերներէն վախցէք , սիրելիք : Ընդգամ մարդիկ ամէն ջանք կ'ընեն ուրիշներուն ալ գէշութիւն սորվեցընելու , որպէս զի իրենց չարութիւնները այնչափ աչքի չեւընան . այս իրենց չար դիտաւորութեանը հասնելու համար փորձ չմնար որ ուղղակի և կամ անուղղակի կերպերով չփորձեն : Ըստ հնարքներուն մէջ ամենէն աւելի հասարակը , և դժբաղդաբար՝ ամենէն աւելի անփորձ պատանիքը խաբողը այն է որ կը ջանան անոնց մտքին մէջ խոթել թէ պարկեշտութիւն ըսածդ նախապաշարմունք մըն է , հնազանդութիւնը՝ տկարութիւն , իսկ առաքինութիւնը առասպել մը : Եւ որպէս զի իրենց նպատակին դիւրաւ հասնին , միայն չար խրատներով գոհ չեն ըլլար՝ այլ օրինակով ալ այն բաները կը քարոզեն . մտիկ չընելու ալ ըլլաք՝ զձեզ ծաղր կ'ընեն : Օգոյշ կեցէք , կ'աղաչեմ , այսպիսի ապականութեան խրատիչներէն . լաւ գիտցէք որ աւելի աղէկ է մէկ առաքինի մարդէ մը պզտի գովեստ մը լսել , քան թէ այն չար մարդոց արհամարհանքն ու ծաղրը :

Ա. ԹԻԻՍ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ

Բ .

Լ Եղբայրներու մասին :

Ա .

Լ ԵԶՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ որ ընդհանրապէս կէս իմաստնոց քան թէ իմաստնոց մէջ պատուած է , մեր ազգին մէջ մեծ պատիւ դտեր է հնուցմէ ՚ի վեր , իրեն լեզուներ սովորելու յարմարութեք և քաղաքական վիճակին հանգամանայն համար : Ըստ համար կը վայել որ քիչ մը քննենք , թէ ըստ ինքեան լեզուազիտութիւնը պատուական բան է , ինչ բանի համար պէտք է սովորիլ և ո՞րչափ , ո՞ր լեզուները պէտք է սովորիլ , և ո՞րչափ հարկաւոր է ազգային լեզուն գիտնալը :

Լ Եզուազիտութեան վրայ խօսողներուն շատը՝ բնաբանի պէս կը գնեն և Վարդու մեծ կայսեր ըսածը , թէ « Մէ » կը որչափ լեզու գիտէ , այնչափ անգամ մարդ է » . և այս խօսքով մէկէն կարգացողին աչքն ու բերանը գոցել կ'ուզեն : (Թ)է որ զրուցողին մեծութիւնը ամէն խօսքն ալ մեծ ընէր , մեք ալ կրնայինք անոր հակառակ բնաբան մը դնել Վարդուէն մեծ ինքնակալի մը խօսքը , Վափուէնին , որ երբ գիմացը բերին նոր հանգուցեալ ծիրանաւորը Սեծոֆանդէ՝ երիտասարդութե ժամանակը , և ըսին թէ այսչափ լեզու գիտէ , պատասխանեց , թէ Սերմն այնչափ անգամ տղայ է : Վարելի է Վարդու կ'ուզէր իմացընել , թէ մէկը որչափ օտար լեզու գիտէ՝ այնչափ օտարազեաց հետ կրնայ խօսիլ և իբր թէ անոնց ազգակից ըլլալ , իսկ Վափուէն թէ որչափ մէկը լեզուներու ետեւէ կ'ըլլայ՝ այնչափ միտքը կը զբաղեցընէ գիտցած բանը նորէն գիտնալու ուրիշ ձայնով մը , և աւելի խօսող քան մտածող կ'ըլլայ :